Ծառայությունների մատուցման պայմանագիր N

ք. Երևան 11 հուլիսի 2014թ.

ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն ի դեմս Միհրան Պողոսյանի, (այսուհետ՝ **Պատվիրատու**) մի կողմից, և քաղաքացի Հայկ Վաթյանը (այսուհետ՝ **Կատարող**) մյուս կողմից միասին անվանվելով **Կողմեր**, կազմեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1 Պայմանագրի առարկան

1.1 **Պայմանագրի** համաձայն **Կատարողը**, իր ուժերով, համաձայն **Պատվիրատուի** տեխնիկական պատվերի (կցված է **Պայմանագրին**, որպես անբաժանելի մաս՝ **Հավելված 1**) լրամշակում և կատարելագործում է իր իսկ կողմից նախկինում մշակված և **Պատվիրատուի** գլխավոր գրասենյակում ներդրված Կատարողական վարույթների հաշվառման համակարգը (այսուհետ՝ **Համակարգ**), ինչը ներառում է հետևյալը.

1.1.1 **Կատարողը** լրամշակում և կատարելագործում է **Համակարգի** տվյալների պահպանման համակարգը՝ տեխնիկական պատվերում (տես Հավելված 1) նշված դրույթներն ու ֆունկցիոնալությանը ապահովելու համար,

1.1.2 **Կատարողը** լրամշակում և կատարելագործում է **Համակարգի** ծրագրային ապահովումը տեխնիկական պատվերում նշված դրույթներին և ֆունկցիոնալությանը համապատասխան,

1.1.3 **Կատարողն** ուսուցանում է **Պատվիրատուի** պատասխանատու մասնագետին՝ իրականացնել թարմացված և լրամշակված համակարգի շահագործումը և կատարել անհրաժեշտ կարգաբերումները,

1.1.4 **Կատարողը** տրամադրում է **Համակարգից** օգտվելու խորհրդատվական օգնություն **Պատվիրատուի** մասնագետին:

1.2 **Պայմանագրի** 1.1 կետով նախատեսված աշխատանքների կատարման ավարտ է համարվում **Համակարգի** լրամշակված տարբերակի փաստացի ներդրման սկիզբը, ինչը հաստատվում է ներդրման վերաբերյալ երկկողմանի ստորագրված ընդունման-հանձման ակտով:

1.3 **Համակարգի** լրամշակված և կատարելագործված տարբերակի վերջնական շահագործումը սկսելուց առաջ **Պատվիրատուն** իրականացնում է հնարավորությունների փորձնական շահագործում, ինչը հաստատվում է երկկողմանի ստորագրված ընդունման-հանձման ակտով:

1.4 **Համակարգի** ներդրման աշխատանքներում երրորդ կողմ չի ներգրավվելու՝ աշխատանքները կիրականացվեն միայն **Կատարողի** և **Պատվիրատուի** մասնագետների ուժերով:

2 Պայմանագրի ժամկետները

2.1 **Պայմանագիրն** ուժի մեջ է մտնում կնքման պահից:

2.2 **Պայմանագրն** ուժի մեջ է մինչև **Կողմերի** ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարումը:

2.3 **Պայմանագիրը** կարող է վաղաժամկետ լուծվել, կողմերից Յուրաքանչյուրի գրավոր պահանջով: **Պայմանագրի** լուծման մասին **Կողմերը** պետք է միմյանց տեղեկացնեն ենթադրվող օրվանից առնվազն 1 (մեկ) շաբաթ առաջ:

3 Պայմանագրի արժեքը և վճարման կարգը

3.1 **Պայմանագրով** նախատեսված աշխատանքների կատարման դիմաց **Պատվիրատուն Կատարողին** վճարում է՝ **համակարգը** լրամշակելու, կատարելագործելու և լրամշակված և կատարելագործված տարբերակը **Պատվիրատուի** գլխավոր գրասենյակում ներդնելու արժեքը, որը կազմում է **1,850,000 (մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ՝ ներառյալ հարկային պարտավորությունները և օրենքով սահմանված պարտադիր վճարները:

3.2 Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո **Կատարողն** անմիջապես սկսում է պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները:

3.3 **Պայմանագրի արժեքը Պատվիրատուն վճարում է Կատարողին՝ համակարգի** լրամշակված և կատարելագործված տարբերակի փորձարկման և փաստացի շահագործման սկիզբը հաստատող երկկողմանի ստորագրված ընդունման-հանձնման ակտերի հիման վրա:

4 Կատարողի պարտավորությունները

4.1 Ժամանակին **և** որակով կատարել **Պայմանագրի** առարկան կազմող աշխատանքները՝ հաշվի առնելով **Պատվիրատուի** պահանջները:

4.2 Պահպանել **Պայմանագրով** նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում հայտնի դարձած՝ **Պատվիրատուին** վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:

4.3 Իրականացնել **Համակարգի** սպասարկումը՝ ծրագրային միջոցների նորացում, անվտանգության ապահովում, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ ու լրացումներ կատարել ինչպես նաև սպասարկման հետ կապված այլ գործողություններ:

5 Պատվիրատուի պարտավորությունները

5.1 Ապահովել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պայմանները:

5.2 Կազմակերպել կատարված աշխատանքների ընդունումը:

5.3 Ժամանակին տրամադրել աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական միջոցները:

5.4 Ապահովել **Համակարգի** անխափան գործունեության համար անհրաժեշտ պայմանները:

5.5 **Պատվիրատուն** իրավունք չունի բազմացնել և երրորդ կողմին տրամադրել **համակարգի** ծրագրային ապահովումն առանց **Կատարողի** համաձայնության:

6 Կողմերի պատասխանատվությունը

6.1 Ներդրման ժամկետը **Կատարողի** մեղքով ուշացման համար **Կատարողը** վճարում է **Պատվիրատուին** տույժ, յուրաքանչյուր ուշացված օրվա համար, **Պայմանագրի** 3.1 կետում նշված արժեքի 0.01 տոկոսի չափով:

6.2 Տույժերի վճարումը **Կողմերին** չի ազատում **Պայմանագրով** ստանձնած պարտավորությունների կատարումից:

6.3 **համակարգը** լրամշակված և կատարելագործված տարբերակով **Կատարողի** կողմից տրամադրվում է "Այնպես, ինչպես կա" **Պայմանագրի** 1.2 կետում նշված ներդրման ժամկետի ավարտին: Ներդրման ավարտից հետո հայտնաբերված թերությունները և բացթողումները լուծվում են հետագայում՝ փոխադարձ համաձայնեցված կարգով: Նման դեպքերում **Կողմերը**

կարող են կազմել լրացուցիչ արձանագրություններ, որտեղ կարող են նշվել հայտնաբերված թերության նկարագիրը, թերության վերացման ժամկետների, եղանակների և կատարողների մասին առաջարկությունը:

7 Այլ պայմաններ

7.1 **Պայմանագրից** բխող յուրաքանչյուր երկկողմանի կնքված արձանագրություն հանդիսանում է սույն պայմանագրի անբաժան մասը:

7.2 Աշխատանքի ընթացքում, **Կողմերի** փոխադարձ համաձայնությամբ, հնարավոր են ցանկացած պայմանների փոփոխումներ, որոնց մասին կազմվում են երկկողմանի արձանագրություններ:

7.3 **Պայմանագրով** չկարգավորված բոլոր հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4 **Պայմանագրի** կատարման հետ կապված հարցերը **Կողմերը** կձգտեն լուծել բարեկամաբար՝ բանակցությունների միջոցով: **Կողմերի** միջև համաձայնության չգալու դեպքում, վիճելի հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5 **Պայմանագրը** կազմված է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

7.6

Կատարող	Պատվիրատու
Հայկ Վաթյան անձնագիր AM 0837467, տրված 18.08.2012թ. 012-ի կողմից, սոց քարտ 1904790011 բնակվող ք.Երևան, Ֆուչիկի 2 նրբ. 3 շենք, բն 40 Հ/Հ 24100057359200 Յունիբանկ	ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ք. Երևան, Հալաբյան 41 ա, ՀՎՀՀ 01223338 Հ/Հ900013288023, կենտր.գանձապ.գործառն.վարչություն ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող՝ Մ. Պողոսյան .....

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ

ԴԱՀԿ ծառայության Կատարողական վարույթների հաշվառման համակարգի լրամշակման և կատարելագործման

1. Ընդհանուր դրույթներ

1.1. **Համակարգ** – ԴԱՀԿ ծառայության կատարողական վարույթների հաշվառումն ապահովող համակարգ:

1.2. **Մոդուլ – Համակարգի** բաղկացուցիչ ծրագրային տարրերի ամբողջություն, որն ապահովում է ԴԱՀԿ ծառայության կատարողական վարույթների հաշվառման համականգի համակցումը այլ ծրագրային համակարգերին:

1.3. **Տվյալների պահոց – Համակարգում** գործածվող էլեկտրոնային փաստաթղթերի, ծառայողական և տեխնիկական տեղեկատուների և մոդուլների էլեկտրոնային պահպանման պահոց:

1.4. **Վարույթ - Համակարգում** առկա և հետագայում ստեղծվելիք կատարողական վարույթի էլ. փաստաթուղթ:

1.5. **Փաստաթուղթ - Վարույթի** հիման վրա ստեղծված և շրջանառված, ծառայողական և տեխնիկական ինֆորմացիա պարունակող էլեկտրոնային փաստաթուղ-հաղորդագրություն:

2. Տեխնիկական պատվերի նկարագրությունը

Համակարգում անհրաժեշտ է կատարել լրամշակումների և կատարելագործուման աշխատանքներ, որոնց ապահոված ֆունկցիոնալությունը և իրականացման ժամկետները համապատասխանում են հետևյալ պայմաններին՝

2.1. պետք է ամբողջական համատեղելի լինեն **Համակարգին** և ենթարկվեն դրա տրամաբանությանը:

2.2. նոր լրամշակված և կատարելագործված ծրագրային ապահովման մեջ պետք է վերանայվի կատարողական վարույթներով գումարի գանձման և բաշխման մեխանիզմները, դրանք ծրագրում ձևակերպելու իրավասությունները:

2.3. նոր կառուցվածքի **Տվյալների պահոց**, որը կապահովի առկա ինֆորմացիայի պահպանումը, կպահպանի առկա ինֆորմացիայի տրամաբանությունը, ինչպես նաև պիտանի կլինի **Վարույթների** և **Փաստաթղթերի** տրամաբանական և տեխնիկական արխիվացման համար:

2.4. նոր լրամշակված և կատարելագործված ծրագրային ապահովումը պետք է իրականացնի Կատարողական վարույթով գանձված գումարի բաշխման տեղեկանքի ավտոմատ գեներացում:

2.5. **Համակարգում** պետք է ստեղծվի նոր աշխատատեղ՝ սպասարկող-օպերատոր, որին վերապահվում է կատարողական վարույթով գումար գանձելու իրավասություն:

2.6. **Համակարգում** պետք է ապահովվի գանձանձ գումարի անդորրագրի ավտոմատ գեներացում և տպագրում:

2.7. Գանձված գումարի մասին համապատասխան գրառումները պետ է արտացոլվեն հաշվետվությունների մոդուլում՝ ապահովվելով կատարողական վարույթներով հաշվետվությունների գեներացման մեխանիզմը:

2.8. **Համակարգում** պետք է կատարելագործվի բաժնի պետի աշխատատեղը՝ ապահովելով վերահսկման և համապատասխան հաշվետվությունների գեներացման մեխանիզմները:

2.9. Պետք է մշակվի **Ուղղակի վաճառքով վաճառվող գույքի համակարգ**, որում պետք է արտացոլվել Ուղղակի վաճառքով վաճառվող գույքի նկարագիրը, վաճառքի օրը, ժամը և վայրը:

2.10. Պետք է մշակվի կայք, որում ավտոմատացված պետք է արտացոլվեն ուղղակի վաճառքով վաճառվող գույքի նկարագիրը, վաճառքի օրը, ժամը և վայրը:

2.11. Կայքը պետք է մշակված լինի գույքի որոնման հնարավորությամբ ինչպես խմբերով, այնպես էլ կոնկրետ նկարագրին համապատասխանությամբ:

2.12. Ուղղակի վաճառքով վաճառվող գույքի նկարագիրը տեղադրվում է կայքում Աճուրդի կազմակերպման և գույքի իրացման բաժին կողմից հաստատվելուց հետո:

2.13. **Ուղղակի վաճառքով վաճառվող գույքի համակարգը և կայքը** կառավարվում է Աճուրդի կազմակերպման և գույքի իրացման բաժնի կողմից:

ԴԱՀԿ ծառայություն ..... (ամիս, ամսաթիվ)